«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"NORTH-SOUTH ROAD CORRIDOR INVESTMENT PROGRAM IMPLEMENTATION ORGANIZATION" STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Թումանյան 38
Հեռ. (374 60) 50 68 70, 50 68 71
38 Tumanyan Str.,Yerevan 0002, Republic of Armenia
Tel. (374 60) 50 68 70, 50 68 71

N 291

« 31 » 03 2014

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ԻՐԱՎԱԲԱՆ Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան 26.03.2014 թ. թիվ 214-ի 2 հարցման, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթին ներկայացվել է 286 մասնակցության հայտ, որոնցից՝

| Պաշտոնի անվանումը | Ներկայացված հայտերի քանակը |
|---|---|
| Տրանսպորտային ոլորտի ինժեներ/ Տնտեսագետ | 9 |
| Ավագ տեղամասային ինժեներ | 10 |
| Տեղամասային ինժեներ | 9 |
| Գնումների և պայմանագրերի կառավարման ղեկավար | 19 |
| Գնումների մասնագետ | 23 |
| Պայմանագրերի կառավարման մասնագետ | 20 |
| Ֆինանսատնտեսական ղեկավար/Գլխավոր հաշվապահ | 33 |
| Հաշվապահական հաշվարման և վճարումների մասնագետ | 44 |
| Իրավական հարաբերությունների խորհրդատու/ Գլխավոր իրավաբան | 37 |
| Բողոքների և վեճերի կառավարման մասնագետ | 11 |
| Կարողությունների զարգացման , մոնիտորինգի և արտաքին կապերի ղեկավար | 22 |
| Դիմել են առանց պաշտոնը նշելու | 49 |
| **Ընդամենը** | **286** |

Ինչ վերաբերում է հարցման 2-րդ կետի ներքո պահանջվող տեղեկատվությանը, ապա տեղեկացնում եմ, որ համաձայն «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի և

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների, հայցվող տեղեկատվությունը խորհրդապահական տեղեկատվություն է, ուստի ենթակա չէ տրամադրման:

Թափուր պաշտոնների համալրման գործընթացն իրականացվում է համապատասխան փուլերով, որի արդյունքներով հաղթող ճանաչված անձանց հետ կնքվում են աշխատանքային պայմանգրեր: Ելնելով մրցույթի կազմակերպման առանձնահատկություններից, գրության 3-րդ կետով հայցվող տեղեկատվության համար հստակ ժամկետների մատնանշելն հնարավոր չէ: Արդյունքների մասին դուք կարող եք տեղեկանալ մեր կազմակերպության կայքից՝ www.northsouth.am:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Լ.Շառոյան
Հեռ. 060 506871,73